ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հաշվի առնելով, որ Սիսիան համայնքի վարչական տարածքում առկա են պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողեր,որոնց վրա առկա են ինքնակամ կառույցներ,համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին»թիվ 912-Ն և «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումների տվյալ կառույցների նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո ինքնակամ կառույցը և առանձնացված հողամասը սահմանված կարգով և գներով կօտարվեն ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով կամ վարձակալության իրավունքով օգտագործման կտրամադրվեն ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Նշված գործառույթը կնպաստի համայնքային բյուջեի եկամտային մասի ավելացմանը, որոնք կնպաստակաուղղվեն համայնքի հետագա ծրագրերի իրականացմանը:

Քաղաքաշինության բաժնի առաջատար
մասնագետի ժ/պ՝ Վ.Խաչատրյան

27.09.2023թ

ՏԵՂԵԿԱՆՔ

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումից հետո համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Քաղաքաշինության բաժնի առաջատար
մասնագետի ժ/պ՝ Վ.Խաչատրյան

27.09.2023թ